



## ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ



Հայաստան, Երևան, 0025, Կոռյունի փ. 2. հեռ. +374060621238, ss@ysmu.am

### ԵՐԵՎԱՆԻ ՄԻԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 12 ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ

Հիմք ընդունելով «Երևանի Միիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետը՝ Համալսարանի Գիտական խորհուրդն ընդունեց հետևյալ **որոշումները**.

#### **Որոշում թիվ 22-10-12-01**

Հավանություն տալ՝ Համալսարանի 2021-2022 ուստարվա ուսումնական աշխատանքներին՝ ըստ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից ներկայացված զեկույցի (կցվում է):

#### **Որոշում թիվ 22-10-12-02**

Առաջարկություն ներկայացնել Համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ Համալսարանի Հոգաբարձուների խորհրդի 2020 թվականի օգոստոսի 31-ի թիվ 2 որոշմամբ հաստատված Համալսարանի կառուցվածքի և հաստիքացուցակի մեջ կատարել լրացումներ և հաստիքակազմում ավելացնել հետևյալ հաստիքները.

- «Բուժական գործ» մասնագիտության կրթական ծրագրի ղեկավար՝ 1,0 դրույք,
- «Ստոմատոլոգիա» մասնագիտության կրթական ծրագրի ղեկավար՝ 1,0 դրույք,
- «Դեղագիտություն» մասնագիտության կրթական ծրագրի ղեկավար՝ 1,0 դրույք:

#### **Որոշում թիվ 22-10-12-03**


Առաջարկություն ներկայացնել Համալսարանի ռեկտորին «Կրթության որակի գնահատման և ապահովման կենտրոնի» առկա հաստիքների աշխատողների համար սահմանել համապատասխան կրթական ծրագրերի կրթության որակի պատասխանատուների պարտականություններ:

#### **Որոշում թիվ 22-10-12-04**

Առաջարկություն ներկայացնել Համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ Համալսարանի ԵՊԲՀ կանոնադրության 97-րդ, 98-րդ, 99-րդ, 100-րդ, 101-րդ, 102-րդ, 103-րդ կետերում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին (կցվում է):

#### **Որոշում թիվ 22-10-12-05**

Հանձնարարել Առարկայական մեթոդական հանձնաժողովների նախագահներին՝ ներկայացնելու առաջարկություններ՝ ըստ մասնագիտական ոլորտային



նմանատիպ կամ կրկնվող գործառույթներ իրականացնող ամբիոնները մեկ ուսումնական դեպարտամենտի ներքո միավորելու նպատակահարմարության հարցերը՝ հիմքում դնելով կրթական ծրագրերի վերջնարդյունքները, ուղղահայաց և հորիզոնական ինտեգրացիան:

**Որոշում թիվ 22-10-12-06**

Առաջարկություն ներկայացնել Համալսարանի հոգաբարձուների խորհրդին՝ քննարկելու՝ մասնագիտական ուղղություններով նմանատիպ կամ կրկնվող գործառույթներ իրականացնող ամբիոնների՝ մեկ ուսումնական դեպարտամենտի ներքո միավորելու նպատակահարմարության հարցերը:

**Որոշում թիվ 22-10-12-07**

Հանձնարարել Ուսումնամեթոդական վարչության Կրթական ծրագրերի բաժնին, առարկայական մեթոդական հանձնաժողովների նախագահների և ամբիոնների վարիչների ակտիվ մասնակցությամբ քննարկել և լրամշակել «Բուժական գործ» անընդհատ և ինտեգրացված ծրագրի վերջարդյունքները՝ դրանք համապատասխանեցնելով ՀՀ ԿԳՄՍ-ի կողմից հաստատված «Բժշկություն» ՀՀ Որակի ոլորտային շրջանակի պահանջներին:

**Որոշում թիվ 22-10-12-08**

Հանձնարարել Առարկայական մեթոդական հանձնաժողովների նախագահներին՝ ուսումնասիրել, հիմնավորել և ԵՊԲՀ Ուսումնամեթոդական խորհրդի քննարկմանը ներկայացնել ուսումնական պլաններում նոր էլեկտիվ առարկաների ընդգրկման անհրաժեշտության մասին հարցը:

**Որոշում թիվ 22-10-12-09**


Հանձնարարել Առարկայական մեթոդական հանձնաժողովների նախագահներին՝ մշակել և ԵՊԲՀ Ուսումնամեթոդական խորհրդի հաստատմանը ներկայացնել ուսումնական պլաններում միջդիսցիպլինար դասախոսությունների և մոդուլների ընդգրկման հարցը:

**Որոշում թիվ 22-10-12-10**

Հանձնարարել Հասարակագիտական առարկաների մեթոդական հանձնաժողովի նախագահին մինչև 2023 թվականի փետրվար ամիսը ներկայացնել հասարակագիտական առարկաների և լեզուների դասավանդման նոր քաղաքականությունը և մեթոդաբանությունը:

**Որոշում թիվ 22-10-12-11**

Հանձնարարել ուսումնական աշխատանքների գծով և գիտության գծով պրոռեկտորներին կրթական գործընթացում հետազոտական ունակությունների դասավանդման բարելավման նպատակով՝ «Հետազոտության հիմունքներ» առարկայի



ծրագրի իրականացումը կազմակերպել «ՔՈՐԲՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնում և մշակել «ՔՈՐԲՅՆ» ուղեղի հիմնարար հետազոտությունների գիտակրթական կենտրոնում հետազոտական կարողությունների տարաբնույթ և խորքային ուսումնասիրման համապատասխան մոդուլներ՝ կրթական տարբեր մակարդակներում սովորողների համար:

**Որոշում թիվ 22-10-12-12**

Հաստատել «Ամբիոնների և դասախոսական կազմի մասին» կանոնակարգի 6 հոդվածի լրացումը (կցվում է):

**Որոշում թիվ 22-10-12-13**

Հանձնարարել Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորին և Իրավաբանական բաժնին՝ նախապատրաստելու դիմում ՀՀ ԿԳՄՍ նախարարությանը՝ անգլերեն լեզվի իմացության մակարդակը ստուգող հանձնաժողովի նախագահի թեկնածություն առաջադրելու վերաբերյալ և կազմակերպել դասախոսների անգլերեն լեզվով դասավանդման թույլտվության քննական գործընթաց:

**Որոշում թիվ 22-10-12-14**

Հանձնարարել Համալսարանի Պրակտիկայի բաժնին՝ մշակել և ներդնել ռոտացիոն կլինիկական պրակտիկայի մոդելը՝ այն մասնակի փոխարինելով ներկայիս գործող տարբերակին:

**Որոշում թիվ 22-10-12-15**

Հանձնարարել Կարիերայի կենտրոնի ղեկավարին մշակել և ԵՊԲՀ Ուսումնամեթոդական խորհրդի հաստատմանը ներկայացնել «Դոկտոր ԼԵՔՍ» արհեստական բանականությամբ օժտված գործիքը ուսումնական պրոցեսի գնահատման համակարգում ներդրման նախագիծը:

**Որոշում թիվ 22-10-12-16**

Հանձնարարել Ուսումնամեթոդական վարչությանը և Կարիերայի կենտրոնին սահմանել վերահսկողություն՝ «Սովորողներին էլեկտրոնային փոստի մասին» կարգի դրույթների պատշաճ իրականացման ուղղությամբ,

**Որոշում թիվ 22-10-12-17**

Հանձնարարել Կարիերայի կենտրոնին հավաքագրել գործատուների խորհուրդ՝ շրջանավարտների իմացական մակարդակի վերլուծության միջոցով կրթական ծրագրերի վերջնարդյունքների բարելավման և առարկայական պլաններում որոշակի փոփոխություններ իրականացնելու նպատակով:

**Որոշում թիվ 22-10-12-18**

Հաստատել «Ակնաբուժություն» մասնագիտությամբ հետդիպլոմային ուսուցման ծրագիրը՝ նոր խմբագրությամբ (կցվում է):



**Որոշում թիվ 22-10-12-19**

Հանձնարարել Դասախոսների որակավորման բարձրացման բաժնին՝ մշակել դասախոսների մասնագիտական որակի բարձրացման նոր հայեցակարգ՝ հիմքում դնելով գործող ձևաչափի բարելավումը և տեսական բժշկության առարկաները դասավանդող դասախոսների մասնագիտական վերապատրաստման գործընթացի կազմակերպումը:

**Որոշում թիվ 22-10-12-20**

Հիմք ընդունելով քվեարկության արդյունքները և հաշվիչ հանձնաժողովի արձանագրությունը՝ ներքին հիվանդությունների պրոպեդևտիկայի ամբիոնի վարիչ Զինաիդա Տիտալի Զնդոյանին և համաճարակաբանության ամբիոնի դոցենտ Մերի Մանուկի Տեր-Ստեփանյանին շնորհել պրոֆեսորի, օրթապեդիկ ստոմատոլոգիայի ամբիոնի դասախոս Արտակ Գագիկի Հեբոյանին, համաճարակաբանության ամբիոնի ավագ դասախոս Արման Ռոբերտի Բադայանին, ֆիզիոլոգիայի ամբիոնի դոցենտ Ադելինա Լևոնի Թորգոմյանին և նույն ամբիոնի ավագ դասախոս Կարինե Վահանի Մելքումյանին՝ դոցենտի գիտական կոչումներ և սույն որոշումը սահմանված կարգով ներկայացնել ՀՀ ԲՈԿ-ի հաստատմանը, կցելով անհրաժեշտ փաստաթղթերը (կցվում է):

**Որոշում թիվ 22-10-12-21**

Շնորհել անվանական կրթաթոշակներ հետևյալ ուսանողներին.

- 1) Ռազմաբժշկական ֆակուլտետ՝ Վիգեն Վազգենի Հովհաննիսյանին՝ Մերուժան Ստեփանյանի անվան կրթաթոշակ:
- 2) Ստոմատոլոգիական ֆակուլտետ՝ Աննա Դավթի Ստեփանյանին՝ Կարլեն Եսայանի անվան կրթաթոշակ:
- 3) Դեղագիտական ֆակուլտետ՝ Կիմա Արամի Պետրոսյանին՝ ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան կրթաթոշակ:

**Որոշում թիվ 22-10-12-22**

Երաշխավորել տպագրության հետևյալ ուսումնական գրականությունները.

- 1) Մ.Դ.Սաֆարյանի, Ա.Պ.Գևորգյանի, Լ.Գ.Գևորգյանի, Տ.Կ.Օլեյանի «Ֆթիզիատրիա» հայերեն լեզվով դասագիրքը:
- 2) Գ.Ռ.Մինասյանի, Լ.Գ.Գևորգյանի «Phthiology» անգլերեն լեզվով ուսումնական ձեռնարկը:
- 3) Ա.Ս.Քոչարյանի «Internal medicine in emergency situations» անգլերեն լեզվով ուսումնական ձեռնարկը:
- 4) Գ.Հ.Ղազարյանի, Ն.Գ.Ազատյանի Ն.Տ.Վարդանյանի «Психология в медицине» ռուսերեն լեզվով ուսումնական ձեռնարկը:



**Որոշում թիվ 22-10-12-23**

Համալսարանի Գիտական խորհրդի սույն որոշումներով նախատեսված հանձնարարականների կատարման ժամկետ սահմանել 2023 թվականի մարտ ամիսը՝ ներառյալ:


**Որոշում թիվ 22-10-12-24**

Համալսարանի Գիտական խորհրդի սույն որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել Համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ՌԵԿՏՈՐ, ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ



Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ



ԳԻՏԱԿԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ



Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ